



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2011թ. երկրորդ եռամսյակում և
առաջին կիսամյակում իրականացված
գործունեության վերաբերյալ**

A 3D bar chart graphic with a blue and grey color scheme. The bars are arranged in a row, and the year "2011" is prominently displayed on the rightmost bar. The chart is partially obscured by a watermark.

2011

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից 2011թ. երկրորդ եռամսյակում և առաջին կիսամյակում իրականացված գործունեության վերաբերյալ

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ինստիտուտ) գործունեությունն ընդգրկում է 4 հիմնական ոլորտներ՝ ստանդարտացման աշխատանքներ, համապատասխանության հավաստման, այդ թվում՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներ, լաբորատոր փորձարկումներ և ուսուցման կազմակերպում: Սույն հաշվետվությունն ընդգրկում է նշված ոլորտներում Ինստիտուտի կողմից 2011թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեությունը, Ինստիտուտի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերափոխումները և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:

1. Ստանդարտացում

Սույն թվականի 1-ին կիսամյակում Ստանդարտների ազգային ինստիտուտը իրականացրել է պետական բյուջեից նախատեսված 5500.0 հազ. դրամի աշխատանքներ հետևյալ գործառույթների համար.

1. Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ՝ 4.200.0 հազ. դրամի

1-ին կիսամյակում մշակվել է թվով 46 ազգային ստանդարտների նախագծեր, որոնցից 35-ը ընդունվել և գործողության մեջ է դրվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից, իսկ 11-ը՝ ներկայացվել է գիտատեխնիկական խորհուրդ:

2. Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում՝ 500,0 հազ. դրամի

2.1 Միջազգային (ԻՍՕ), եվրոպական (ԵՆ) և միջպետական (ԳՕՍՏ) ստանդարտների նախագծերի փորձաքննություն

2.2 Միջազգային և միջպետական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն

2.3 ԱՊՀ երկրների ստանդարտացման միջպետական խորհրդի, ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) և Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵՆ) աշխատանքների կազմակերպում:

3. Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ՝ 800,0 հազ. դրամի

3.1. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ֆոնդի համալրում և հաշվառում

3.2. Ընդունված ազգային ստանդարտների գրանցում

3.3. Հայաստանի Հանրապետությունում գործող ազգային ստանդարտների ֆոնդի վարում

3.4. Հայաստանի Հանրապետության կազմակերպությունների տեղեկատվական սպասարկում

3.5. «Ստանդարտ» տեղեկատվական-որոնման ավտոմատացման համակարգի ներդրում

3.6. Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտների ամբողջ տեքստի տվյալների բազայի (էլեկտրոնային տարբերակների) ստեղծում, հաշվառում և պահում

3.7. ԱՀԿ անդամ երկրների տեղեկատվական (հարցման) կենտրոններին համապատասխան հարցումների տրամադրում

3.8. Ազգային ստանդարտների կառավարի, եռամսյակային տեղեկատվի նախապատրաստում և հրատարակում:

1-ին կիսամյակում մշակվել է թվով 46 ազգային ստանդարտների նախագծեր, որոնցից 35-ը ընդունվել և գործողության մեջ է դրվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից, իսկ 11-ը՝ ներկայացվել է գիտատեխնիկական խորհուրդ:

Ստանդարտների նախագծերը մշակվել են Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից՝ ՀՀ ստանդարտացման 2011 թ. ծրագրի նախագծի հիման վրա:

1-ին կիսամյակում 2011թ. ստանդարտացման ծրագրով նախատեսված 68 ստանդարտներից մշակվել է 46 (68%) ազգային ստանդարտների նախագծեր և 1 փոփոխություն:

1-ին կիսամյակում ինստիտուտը ստեղծել է 4 նոր ստանդարտացման տեխնիկական հանձնաժողով՝ ՏՀ 12 «Ճանապարհային տրանսպորտ», ՏՀ 15 «Կոսմետիկական արտադրանք», ՏՀ 14 (ԻՍՕ/ՏՀ 207) «Շրջակա միջավայրի կառավարում» և ՏՀ 13 «Հեռահաղորդակցություն»: Ինստիտուտը վերակազմավորել է ՏՀ 2 «Միս, թռչնի միս, ձուկ, ձու և դրանց հիմքով արտադրանք» և ՏՀ 7 «Հակասեյսմիկ սարքավորանք» տեխնիկական հանձնաժողովները, ինչպես նաև կազմակերպել և անցկացրել է տեխնիկական հանձնաժողովների 15 նիստ:

Ինստիտուտն իրականացրել է նախապատրաստական աշխատանքներ ՏՀ «Բանկային գործ և ֆինանսական ծառայություններ» տեխնիկական հանձնաժողովների ստեղծման համար:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել է միջազգային ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկության աշխատանքներ, որի ընթացքում 42 միջազգային ստանդարտների նախագծեր անցել են փորձաքննություն և համաձայնեցվել են ՀՀ-ում բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ: Կատարվել են վերլուծական աշխատանքներ նոր ընդունված ԻՍՕ և ԵՆ ստանդարտները ՀՀ-ում կիրառման վերաբերյալ: Նախապատրաստվել են տնտեսության տարբեր գյուղերի համար միջազգային և եվրոպական ստանդարտների ցանկեր, որոնց կիրառման վերաբերյալ ՀՀ-ում կարծիքներ պետք է հավաքվի բոլոր շահագրգիռ կազմակերպությունների կողմից: 1-ին կիսամյակում իրականացվել է 76 միջազգային ստանդարտների նախագծեր փորձաքննություն:

2011 թվականի 2-րդ եռամսյակում Ստանդարտների ազգային ֆոնդը համալրվել է 388 միջազգային (ԻՍՕ), 272 Եվրոպական (ԵՆ), 23 միջպետական (ԳՕՍՍ), 214 Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՍ Ռ) և 35 Հայաստանի Հանրապետության (ՀՍ) նոր ստանդարտներով: Ստանդարտների էլեկտրոնային տարբերակները արխիվացվել են, իսկ թղթի կրիչով ստանդարտները հաշվառման են վերցվել մատյանում:

Ստանդարտների ազգային ֆոնդի արդիականացման նպատակով 2011 թվականի 2-րդ եռամսյակում կատարվել է 235 միավոր ստանդարտի տեխնիկական մշակում:

Ընդհանուր հաշվով 1-ին կիսամյակում ստանդարտների ազգային ֆոնդը համալրվել է 654 միջազգային (ԻՍՕ), 501 Եվրոպական (ԵՆ), 37 միջպետական (ԳՕՍՍ), 381 Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՍ Ռ) և 49 Հայաստանի Հանրապետության (ՀՍ) նոր ստանդարտներով: Ստանդարտների էլեկտրոնային տարբերակները արխիվացվել են, իսկ թղթի կրիչով ստանդարտները հաշվառման են վերցվել մատյանում:

Ստանդարտների ազգային ֆոնդի արդիականացման նպատակով 1-ին կիսամյակում կատարվել է 430 միավոր ստանդարտի տեխնիկական մշակում:

Սպասարկման նպատակով ինստիտուտը 2011 թվականի 2-րդ եռամսյակում իրականացրել է 51 ՀՀ կազմակերպությունների համար տեղեկատվական բաժանորդային սպասարկում ստանդարտացման և համապատասխանության բնագավառում: 1-ին կիսամյակում իրականացրել է 54 ՀՀ կազմակերպությունների համար տեղեկատվական բաժանորդային սպասարկում: Կնքվել է 36 կազմակերպությունների հետ պայմանագրեր՝

4.620.0 հազ. դրամի, որից 18-ը կնքվել է 2-րդ եռամսյակում՝ **1.480.0 հազ. դրամի**:

Աբոնենտային տեղեկատվական սպասարկման արդյունքում 1-ին կիսամյակում կազմվել է 27 ակտ՝ **3.702.0 հազ. դրամ**, որից 11-ը կազմվել է 2-րդ եռամսյակում՝ **1380,0 հազ. դրամ**, հետևյալ կատարված աշխատանքների մասին.

✚ տեղեկատվության տրամադրում ազգային ֆոնդում միջազգային (ԻՍՕ, ԻԷԿ, ԵՆ), միջպետական (ԳՕՍՏ), Հայաստանի Հանրապետության (ՀՍ) և արտասահմանյան երկրների (այդ թվում ԱՊՀ) ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի մասին,

✚ կազմակերպությունների ստանդարտների ֆոնդի արդիականացում,

✚ ՀՀ ստանդարտների ամենամյա կատալոգի, ստանդարտների և տեխնիկական պայմանների եռամսյակային տեղեկատուների տրամադրում,

✚ աբոնենտին անհրաժեշտ ազգային ստանդարտների անվճար տրամադրում (թվով 20),

✚ խորհրդատվություն ստանդարտացման և համապատասխանության հավաստման փաստաթղթերի վերաբերյալ:


Իրականացվել է նաև տեղեկատվական սպասարկում ՀՀ պետական կառավարման մարմիններին, բոլոր կազմակերպություններին, ֆիզիկական անձանց և ստանդարտների ազգային ինստիտուտի ստորաբաժանումների շուրջ 855 դիմողների համար: Նշված աշխատանքները իրականացվել են պետպատվերի շրջանակներում:

Կազմակերպվել է վճարովի ծառայություն՝ տեխնիկական պայմանների մշակման խորհրդատվություն, որի հիմնական նպատակն է օգնել միջին և փոքր ձեռնարկություններին և անհատ ձեռնարկատերերին մշակել կոնկրետ տեսակի արտադրանքի համար տեխնիկական պայմաններ՝ համաձայն գործող նորմատիվ իրավական փաստաթղթերի և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտների պահանջներին:

Կատարվել են շուրջ 52 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար խորհրդատվական աշխատանքներ: Նշված ծառայությունների գումարը կազմել է **2.046.0 հազ. դրամ**:

1-ին կիսամյակում խորհրդատվական աշխատանքները իրականացվել են **4.246.0 հազ. դրամի**:


Գծանկար 1. Խորհրդատվական աշխատանքներից ստացված գումարային դինամիկան 2010 թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ, հազ. դրամ



2011թ. 2-րդ եռամսյակում ինստիտուտն իրականացրել է 117 տեխնիկական պայմանների և 31 տեխնիկական պայմանների և դրանցում փոփոխությունների փորձաքննության աշխատանքներ՝ **5.240.0 հազ. դրամի**:

1-ին կիսամյակում ինստիտուտն իրականացրել է 168 տեխնիկական պայմանների և 73 տեխնիկական պայմանների և դրանցում փոփոխությունների փորձաքննության աշխատանքներ՝ **7.960.0 հազ. դրամի**:


Գծանկար 2. Տեխնիկական պայմանների փորձաքննության աշխատանքներից ստացված գումարային դինամիկան 2010 թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ, հազ. դրամ



2011թ. 2-րդ եռամսյակում ինստիտուտն իրականացրել է ստանդարտների վաճառք ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին՝ 110 ստանդարտ՝ 494.0 հազ. դրամի:

1-ին կիսամյակում ինստիտուտն իրականացրել է ստանդարտների վաճառք 969.0 հազ. դրամի:

Գծանկար 3 - ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի գումարային դինամիկան 2010 թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ, հազ. դրամ



«Ստանդարտ» տեղեկատվական որոնման համակարգի արդիականացման նպատակով բաժնի կողմից համակարգչի միջոցով իրականացվել է ազգային ստանդարտների տվյալների բազայի մուտքագրում: 2011 թ-ի 2-րդ եռամսյակում մուտքագրվել է էլեկտրոնային բազայում Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դրված 35 ազգային ստանդարտների մատենագիտական տվյալները:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության գործատուներին և մասնագետներին սպառիչ տեղեկատվություն ապահովելու համար նախապատրաստվել է հրատարակման համար «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» 2011- N1 և N2 եռամսյակային տեղեկատու, ինչպես նաև N 2, N 3 տեղեկատվական թերթիկները: Բաժինը կատարել է համապատասխան աշխատանքներ 2011թ. N2 «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատու նախապատրաստելու ուղղությամբ: Նախապատրաստվել է 2011թ. «ՀՀ ստանդարտների կատալոգ» հրատարակման համար:

2. Փորձարկման լաբորատորիաներ

Ինստիտուտում գործում են 6 հավատարմագրված փորձարկման լաբորատորիա:

Երևանի փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում ընդունվել է 558 հայտ և տրվել է 558 փորձարկման արձանագրություն, 2-րդ եռամսյակում ընդունվել է 280 հայտ և տրվել է 280 փորձարկման արձանագրություն:

Երևանի նավթամթերքի փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում ընդունվել է 363 հայտ և տրվել է 363 փորձարկման արձանագրություն, 2-րդ եռամսյակում ընդունվել է 139 հայտ և տրվել է 139 փորձարկման արձանագրություն:

Ֆիզիկաքիմիական փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում ընդունվել է 94 հայտ և տրվել է 94 փորձարկման արձանագրություն, 2-րդ եռամսյակում ընդունվել է 64 հայտ և տրվել է 64 փորձարկման արձանագրություն:

Ռադիոէլեկտրական սարքավորումների փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում ընդունվել է 78 հայտ և տրվել է 78 փորձարկման արձանագրություն, 2-րդ եռամսյակում ընդունվել է 43 հայտ և տրվել է 43 փորձարկման արձանագրություն:

Գյումրու փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում ընդունվել է 315 հայտ և տրվել է 315 փորձարկման արձանագրություն, 2-րդ եռամսյակում ընդունվել է 194 հայտ և տրվել է 194 փորձարկման արձանագրություն:


Վանաձորի փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում ընդունվել է 161 հայտ և տրվել է 175 փորձարկման արձանագրություն, 2-րդ եռամսյակում ընդունվել է 87 հայտ և տրվել է 97 փորձարկման արձանագրություն:

2011 թ. 1-ին կիսամյակում կատարվել է 1491 փորձարկում:


ՓԼ-ների առջև խնդիր է դրված տանել աշխատանքներ փորձարկման ծավալների ավելացման ուղղությամբ: Այդուհանդերձ, ներկայումս նկատվում է փորձարկման ծավալների անկում՝ կապված սերտիֆիկացման ծավալների նվազման հետ:

Առկա խնդիրներից է ստանդարտ և քիմիապես գերմաքուր նյութերի ձեռքբերման հարցը:

Գծանկար 4 - Ինստիտուտի հավատարմագրված լաբորատորիաներում կատարված փորձարկումների քանակական դինամիկան 2010 թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ



Գծանկար 5 - Ինստիտուտի հավատարմագրված լաբորատորիաներում կատարված փորձարկումների գումարային դինամիկան 2010 թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ, դրամ



3. Համապատասխանության հավաստում

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կազմում հավատարմագրված սննդի և պարենային հումքի, ոչ պարենային ապրանքների, ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները շարունակել են իրականացնել համապատասխանության հավաստման աշխատանքներ: Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների գործունեության ծավալներն ամենախոշորն են հանրապետությունում՝ համեմատած մյուս մարմինների գործունեությանը: Այսպես, 1-ին կիսամյակում տրվել են՝

ա) ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սերտիֆիկացման գծով տրվել են՝

755 համապատասխանության սերտիֆիկատ,

364 համապատասխանության հայտարարագիր,

Համապատասխանության հսկողություն է իրականացվել 63

կազմակերպություններում

120 ծառայությունների սերտիֆիկատ

բ) սննդի և պարենային հումքի գծով տրվել են՝


562 համապատասխանության սերտիֆիկատ,

427 համապատասխանության հայտարարագիր

Ընդունվել է 16 դադարեցման և կասեցման որոշումներ

Իրականացվել է 49 համապատասխանության հսկողություն

Գծանկար 6 - Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների կողմից տրված սերտիֆիկատների քանակական դինամիկան 2010 թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ



4. Կառավարման համակարգերի սերտիֆիկացում

1-ին կիսամյակում ընդունել է որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման 10 հայտ և 13 կազմակերպությունում իրականացրել է կառավարման համակարգերի համապատասխանության հսկողություն, որից 2-իդ եռամսյակում ընդունել է կառավարման համակարգերի սերտիֆիկացման 3 հայտ, իրականացրել է 4 սերտիֆիկացում, 5 կազմակերպությունում իրականացրել է կառավարման համակարգերի համապատասխանության հսկողություն:

2010 թ. երկրորդ եռամսյակում ինստիտուտն իրականացրել է՝

3 կառավարման համակարգերի սերտիֆիկացում,

3 սերտիֆիկացված կառավարման համակարգերի համապատասխանության

հսկողություն:

2011թ. II եռամսյակում կառավարման համակարգերի սերտիֆիկացման բաժինը հավատարմագրվել է որպես սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին:

Իրացվում են աշխատանքներ կազմակերպություններին կառավարման համակարգերի սերտիֆիկացման վերաբերյալ իրազեկման ուղղությամբ:


5 Ուսումնական կենտրոն

Հաշվետու եռամսյակում ՀՀ 25 կազմակերպությունից և 5 անհատից ստացված նամակների ու հայտերի համաձայն՝ 76 հայտատուից ձևավորվել է ունկնդիրների 12 խումբ, որոնց համար կազմակերպվել է համապատասխան ուսուցում և վերապատրաստում՝ ընդհանուր, ներածական և մասնագիտական դասընթացների միջոցով՝ տեղեկատվական նյութերի և փաթեթների տրամադրմամբ: Դասընթացներն անցկացվել են աշխարհում ընդունված առաջադեմ ինտերակտիվ մեթոդներով ու գործիքներով՝ սլայդների ցուցադրմամբ, դասախոսությունների, գործնական խաղերի, խաչաձև հարցումների, դերախաղերի, «ուղեղային գրոհների», թեստերի, առաջադրանքների, հետադարձ կապի, իրավիճակների վերլուծությունների միջոցով: Վերապատրաստումը գնահատվել է թեսթավորումների միջոցով, որոնց արդյունքներով ունկնդիրներին հանձնվել են վկայականներ՝ սահմանված կարգով գրանցելով գրանցամատյանում:

Ընդհանուր հաշվով 2011 թ. 1-ին կիսամյակում Կենտրոնում ՀՀ 42 կազմակերպությունից և 5 անհատից ստացված նամակների ու հայտերի համաձայն վերապատրաստվել են 127 ունկնդիր և ՀՀ բուհերի 8 ուսանող: Հաշվետու կիսամյակում վերանայվել և արդիականացվել են համապատասխանության գնահատման ոլորտում

փորձագետների որակավորման հարցաշարերը: Կազմակերպվել է փորձագետների որակավորման 1 թեսթավորում և 1 հարցազրույց, որին մասնակցել են ՀՀ 3 կազմակերպությունից 5 հավակնորդ: Համապատասխանության գնահատման բնագավառում փորձագետների որակավորման հանձնաժողովի որոշմամբ ՀՀ 2 կազմակերպության 3 հավակնորդի հանձնվել է տարբեր ոլորտների փորձագետի 8 վկայագիր՝ սահմանված կարգով գրանցելով Ստանդարտների ազգային ինստիտուտի էլեկտրոնային կայքում և գրանցամատյանում:

Գծանկար 7 - Կենտրոնում վերապատրաստված կազմակերպությունների քանակական դինամիկան 2010 թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ



Երկրորդ եռամսյակում Կենտրոնում անցկացվել է 354 դասաժամ:

Ընդհանուր հաշվով 2011 թ. 1-ին կիսամյակում Կենտրոնում անցկացվել է 580 դասաժամ:

Սահմանված կարգով և հաղորդակցության արդիական միջոցներով ՀՀ կազմակերպությունները պարբերաբար իրազեկվել են Կենտրոնում կազմակերպվող դասընթացների, սեմինարների և այլ միջոցառումների մասին: Ապահովվել է կապը և համագործակցությունը ՀՀ բուհերի և հատկապես՝ Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական և Հայաստանի պետական ագրարային համալսարանների համապատասխան ֆակուլտետների դասախոսների և ուսանողների հետ՝ նրանց հաղորդակից դարձնելով Կենտրոնի ծրագրերին և նախաձեռնություններին:

2011թ-ի գործունեության ծրագրի համաձայն Կենտրոնի ղեկավարը անցկացրել է Հայաստանի պետական ագրարային համալսարանի պարենամթերքի տեխնոլոգիաների

ուղղությամբ մասնագիտացող ուսանողների և համապատասխան ամբիոնների դասախոսների համար իրազեկման թրեյնինգներ՝ նվիրված էկոլոգիական կառավարման համակարգերի ԻՍՕ 14000 շարքի ստանդարտներին և սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի ԻՍՕ 22000 շարքի ստանդարտներին:

Կենտրոնի 2011թ-ի երկրորդ եռամսյակի գործունեության համադրումը 2011թ-ի առաջին եռամսյակի հետ թույլ է տալիս փաստելու հետևյալը:

- Ընդլայնվել է Կենտրոնի ծառայություններից օգտվող հայտատուների շրջանակը, որում ներգրավվել են արտադրողներ, բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների փորձարկող-մասնագետներ, տեխնիկական հանձնաժողովների անդամներ, բուհերի շրջանավարտներ: ***Այս փաստը Կենտրոնի պահանջված լինելու ցուցանիշ է:***

- Ավելացել է հայտատու-կազմակերպությունների և դրանք ներկայացնող ունկնդիրների և խմբերի թիվը (<< 17 կազմակերպության 5 խմբում ընդգրկված 46 ունկնդիր փոխարեն՝ 25 կազմակերպության 12 խմբում ընդգրկված 76 ունկնդիր): ***Այս արձանագրումը Կենտրոնի վարկանիշի աճի և պարզաճ մակարդակով գործունեություն վարելու ցուցանիշ է:***

- Գնահատման թերթիկների արդյունքներով ունկնդիրների պահանջմունքների բավարարվածությունը գնահատվել է ***առավելագույնը՝ 100%*** (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 99% - ի փոխարեն): ***Այս փաստը հավաստում է Կենտրոնում որակի կառավարման հիմնարար սկզբունքի կիրառման մասին, որն է ուղղվածությունը դեպի սպառողը (ունկնդիրը):***

- Ունկնդիրների առաջարկները հաշվի առնելով ավելացվել են գործնական աշխատանքների, լաբորատոր փորձարկումների, քննարկումների ժամերը, համալրվել են թրեյնինգների ընթացքում տրամադրվող ուսումնամեթոդական փաթեթները ու նյութերը:

- ***Ընդլանվել է կապը և համագործակցությունը ՀՀ սննդարտադրողների հետ,*** որոնց պահանջարկից ելնելով մշակվել են նոր դասընթացների թեմատիկ պլաններ և ծրագրեր, դրանց հիման վրա կազմակերպվել են համապատասխան թրեյնինգներ: Այսպես՝ Հանքային ջրերի գործարանի փորձարկման լաբորատորիայի անձնակազմի համար իրականացվել է մանրէաբանական ցուցանիշների որոշման մեթոդների ուսուցում:

- ***ԱՖՆՈՐԻ Ուսումնական կենտրոնի ծրագրերի ուսումնասիրության հիման վրա տեղայնացվել է միջազգային փորձը,*** լրամշակվել են մենեջմենթի համակարգերին և փորձարկման լաբորատորիաներին ներկայացվող միջազգային պահանջները ուսուցանող թրեյնինգների ծրագրերը:

Կենտրոնում առկա են հետևյալ խնդիրները.

➤ Կենտրոնի անձնակազմի համալրում մասնագետ--թրեյներներով, որոնք պետք է տիրապետեն թրեյնինգների միջազգայնորեն ընդունված գործիքներին, մեթոդներին, կանոններին,

➤ միջազգային թրեյներների միջոցով Կենտրոնի անձնակազմի համար թրեյնինգների կազմակերպում,

➤ ունկնդիրների պահանջների, առաջարկների, գնահատականների հիման վրա թրեյնինգների ուսումնամեթոդական բազայի շարունակական բարելավում,

➤ ՀՀ բուհերի հետ աշխատանքների ակտիվացում, որը կնպաստի ՀՀ-ում մրցունակ մասնագետների ձևավորմանը:

➤ ՀՀ սննդարտադրողների հետ աշխատանքների ակտիվացում, հատկապես սննդարդյունաբերությունում վտանգների վերլուծության և հսկման կրիտիկական կետերի HACCP համակարգի պահանջների ուսուցման խնդրով:

➤ Կենտրոնի բոլոր գործընթացների շարունակական բարելավում:

6 Ինստիտուտի հիմնական գործունեությանն առնչվող այլ աշխատանքներ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 55-Ա հրամանով հաստատված նոր կառուցվածքի և հաստիքացուցակի համաձայն՝ 2011 թվականի 2-րդ եռամսյակում աշխատանքից ազատվել են 11 աշխատող, որոնցից 1-ը՝ դիմումի համաձայն, իսկ 10-ը՝ գործատուի նախաձեռնությամբ: Աշխատանքի են ընդունվել 6 հոգի: Հաշվետու եռամսյակում Ինստիտուտն աշխատանքներ է իրականացրել կադրային ու փաստաթղթաշրջանառության գործունեության կազմակերպման ոլորտում, ինչը կապված էր ընկերության վերակազմավորման աշխատանքների հետ:

Ստանդարտների ազգային ինստիտուտի (ՍԱՐՄ) փոխտնօրենը 2011թ. ապրիլի 4-5 ք.Ժնևում (Շվեյցարիա) մասնակցել է ԻՍՕ-ի Ինստիտուցիոնալ հզորացման ծրագրի մեկնարկին նվիրված սեմինարին: Այդ ծրագրով ընտրվել է 16 զարգացող երկիր, որոնց ստանդարտացման ազգային ինստիտուտները պետք է ենթարկվեն ԻՍՕ-ի փորձագետների համակողմանի ուսումնասիրությանը և կատարվի կարիքների գնահատում: ԱՊՀ երկրներից ընտրվել են Հայաստանը, Ուզբեկիստանը և Ադրբեջանը:

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենը 2011թ. հունիսի 7-8 ՍԵՆ-ՍԵՆԵԼԵԿ 7-րդ տարեկան վեհաժողովին, որը տեղի ունեցավ Լեհաստանի Կրակով քաղաքում:

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ե.Ազարյանը 2011թ. հունիսի 20 մասնակցեց ԻՍՕ-ի Խորհրդի ռազմավարական հարցերով մշտական հանձնաժողովի 31-րդ նիստի աշխատանքներին:

6 Ինստիտուտի գործունեության 01.01.2011-01.06.2011թ. ֆինանսադնտեսական ցուցանիշները

Thank you for trying PDF Suite